

Այս է ահաւասիկ Ամովի Աղեքանդրոցը, համարտրբառ երկասիրութեան նկարագիրը, զոր կու տայ ՚ի յիշեալ թղթին ուռ կարպիանոս։ Գրուր թէ իրմէ առած է զիսակարգութեանց ( չեփածաւ ) դրութիւնն, այլ միոյն թէ անոր երկասիրութեան թերի մասունքն յորդորամիտը թինք՝ իր ըրածէն տարրեր և լու ագոյն աշխատասիրութեան մը ձեռք զարնել, որ առաւ ել շայեկան բլայ ընթերցողաց, խուսափելով անոր պահաններէն։ Ուստի վրեպեցաւ բոգմանջակ վարդապետն արևմտեան եկեղեցւոյ Հերոնիմոս ՚ի կարծելն թէ Եւսեբեայ գրածը հետևողութիւն է Ամովի և ոչ այլ ինչ<sup>1</sup>։

Շարունակելի

### ԵԶՆԻԿ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Տես էլ 14)

**Ե**ԶՆԿԱՅ մատեան՝ Եղծ աղանդոց կողման՝ ՚ի չորս մասունք բաժանեալ է սովորաբար ՚ի տպագիրս և ՚ի ձեռագրին։ յորոց իւրաքանչեւր մասին մեջ ուրբյն կը խօսի նու հարդաւ ընդգեմ Հեթանոսաց, Պարսից, իմաստնոցն Յունաց և Մարկիոնի։ Սակայն, եթէ որ հետախոյ ազօթ ընթեռնու զայն, պիտի տեսնէ ան, շուշտ՝ որ այն չորս մասունց կամ գրոց մեջ կայ ծածկուած ուրիշ մոտ մի ես կամ գիրք մի, որ գրեթէ խառնուեր է միւս ծանօթ մասունց հետ։ և այս բանս հաստատ աելու համար ունիմք մի քանի պատճառներ և վեյցութիւնք։

Եթէ, օրինակի ազգաւու, բանամք առաջին գիրք և հետզետե յառաջ վարեմք ընթերցումնիս, անգէն մեր մասաց առջև զիմէտ տեսարան մի կը բացուի։ Կարծես թէ կը տեսնեմք տիեզերական վիճը կամ ( Շահրան այնքան խուռան՝ ) պազնոց և մոլորութեանց, որոց հակառակ յատակ և պայծառ կը ցոլանց ճշմարտութեան իրեւ լցո՞մ՝ ՚ի գրչէն մանաւանդ թէ և ՚ի մասց Նշնկայ և կը հերքէ զայն։ Մի առ մի՝ մեջ կը բերէ անդ հեթանոսաց աղանդքը, հիւզեայ, չորի և սարւոյ, մարդոյս և գիւտաց անձնիշնանութեան խնդիրքը ևն, որոց դէմ կը գնէ իւր զօրուոր ապացու։ ցութեանքը։ Սակայն մի և ոյն գրոց մեջ կը պատահիմք այնպիսի տեղերու, ուր մատենացիրն թուի թուլուլ զնիթ անոսս և խօսիլ մերթ առ հաւատացեալս, և մերթ հերետիկոսաց կամ հերձուածուզաց գէմ, ուր յայտնի կ'երեկի թէ կ'ընդունենին զԱ. Կիրս և հաւատացին Քրիստոսի Մարգիկութեան։ Աւ այս բանս մը թէ միայն առաջին գրոց մեջ կամմիքանի տեղմայն կը տեսնեմ, այլ յաջորդաբար երեք առաջին գրոց մեջ ևս կը տեսնուի. անորց բերանց կը գնէ առարկութիւններ, երբ բնմ ևս նուռը խնդիրներ, զօրս մի առ մի կը պարզէ և կը հերքէ։

Արդ, եթէ բովանդակ գրոց վրա հետախոյ ակնարկ մը ձենիք, պիտի տեսնիմք որ Ա. Այնպիսի խնդիրներ կը յուզէ, որում Հեթանոսոր կամ Պարսիկը կամ Յունաց իմաստունքն այնքան կարեւորութիւն չկը տար։ և ուր ուզզակի նոցա

1 Canones quos Eusebius Cœsareensis episcopus, Alexandrinum secutus Ammonium, in decem numeros ordinavit, sicut in greco habentur, expressissimus. Περὶ τῶν ἀπολ. Ammonius evangelii Canones excogitavit, quos postea secutus est Eusebius Cœsareensis.

հնդրոյն հետ վերաբերութիւն չ'ունին. որպիսիք են յառաջին, գիրս Մարդոյս անձնիշխան ազատութիւնն, նորա երանութիւնն՝ի դրախտին նախ քան զմեղանչեն. հրեշտակաց թուութիւնն (90—91 և 100—102), Աստուծոյ այլ և այլ կերպարանօք երեխն մարդարեկց, պահապան հրեշտակքն, ևն. յերկրորդ գիրս, Աստուծոյ կանագիտութեան, նախասահմանութեան և մարդոյս ազատութեան նուրբ խնդիրքն (163—173). իսկ յերրորդ գիրս, Քրիստոնի գալուստեան նկատմամբ այլ և այլ հարցեր (230—235), յորս մոլորեցն յիրաւի շատ հրետիկոսոք: Բ. Հեթանոսաց գէմ գրած միջոց յայնապէս կ'ըսէ, թէ կարեկ չէ ՚ի Ա. Գրոց վկայութիւնք մէջ բերել և ուզոց հերքել զանոնք, վանզի «Եթէ հեթանոսը աստուածական օրինացն հաւատացին, անդատին յօրինացն առնեաց պատասխանի» (Էջ 70). այլ հարկ է, կ'ըսէ նա, թուութեան օրինակօց և բանական փաստիք հերքել անոնց առարկութիւնքը: Սակայն կարեն թէ կը հակառէ Եղնիկ իւր տնձին. վանզի անմիջապէս ՚ի հաւագայ է՞ն: Ա. Գրոց վկայութիւնը մէջ կը բերէ, և անտի կ'առանու իւր ձեռաւարկութիւնքը: Գարձեալ ուրիշ տեղ մը գրեթէ նոյն խօսերը կը կրկնէ. երբ կ'ըսէ, թէ վանզի և նորա (հեթանոսն) աստուածական օրինացն ոչ հաւատան», ուստի և աւելորդ է անոնց գէմ Ա. Գրոց վկայութեամբք զինուիլ, սակայն «մեք յուղըրդ պատասխանեց զմբր ընտանիս մի զըկենուոք» (Էջ 68): Ուստի ահա յայնապէս կը տեսնուի, թէ Եղնիկ միտքն է Ա. Գրոց վկայութիւնքը մէջ բերել միոյն հաւատացելոց համար կամ հերետիկոսաց գէմ:

\* Կրնամբ ըսէլ: Թէ Եղնիկ իւր այս դիառումք գեռ աւելի պարզաբար բացարկ. ըսէ և հաստատելու համար, ևս մեծապյն վկայութիւն մի մէջ կը բերէ իւր առաջին գրոց վերը, որ կը զօրի նաև ՚ի հաստատութիւն մեր խնդրոյն. «Եւ արդ, կ'ըսէ, Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այս է, զարտարինան իրօց Տշմորտութեան առանց (սուրբ) Գրոց յանդիմանել, և զկարձեալն ներքինս և ոչ հշմորտեալս (որք են հետեւիկոսք և հերձուածուոք) Գրովք որովոք յանդիմանել» (Էջ 111):

Սոյն կառու՞ որ թէպէտ մեր խնդրոյն մեծապէս կը նպաստէ, սակայն հարկ է ըսէլ որ աննենին անյարձնար է այնակեզ. վանզի երկու իրարու կցորդեալ իմաստից մէջ կամ թէ երկու սոորակէտակի մէջ, եթէ կարեկ ըլլայ այսպէս ըսէլ միջանկալ հատուած մի կ'երեի, ինչպէս անդրագարձեր է անցւու որ և է ընթերցող:

Դարձեալ բովանդակ գրոց մէջ մերթ ընդ մերթ կը պատահիմք (Հեղնակին) այն պիսի բացարարութեանց և իմաստից, որք կրնան հաստատել մեր խնդիրը, եթէ ոչ ասուառութեամբ՝ գոնեա շատ հաւատականութեամբ: Կը տեսնեմք որ Եղնիկ յամանի կը զանազանէ իւր հակառակորդը այլ և այլ անուամբք, մերթ յայնի կ'ըսէ Հերանոսց, Պարսիկ, Յուլիք, Խմաստունից Յնիանց (110, 202) և արտաքին իմաստոնեց (101, 187), և մերթ պարզաբար կ'ըսէ միոյն զնդդիմակաց կողմն (167, 168), ուստի կ'երեի թէ առաջնոնքն զատի են ՚ի վերջուոց: Վանզի միջեռ առաջնոց գէմ կը խօսի թակառն և բանական պարձառարանութեամբք: իսկ յեանց գէմ միայն Ա. Գրոց վկայութեամբք կը կոուի. գարձեալ, առաջնոց գէմ ընդ հանուր կը նից և աստուածապատութեան խնդիրքը կը յուզէ, իսկ վերջուոց գէմ քրիստոսս. կան հաւատաց վարդապատութիւնը կը յուցընէ և աստուածաբանութեան բարձր և նրբին խնդիրքը կը պարզէ: Դարձեալ ոմանք ՚ի հակառակորդաց մերթ ընդ մերթ ՚ի Ա. Գրոց առարկութիւններ կը բերեն, ինչպէս Եղնիկ ևս կը վկայէ, «Եւ այլոց ՚ի Գրոց պատճառս առեալ, տան. ՚ի նոյն իսկ Գրիս գրեալ է, ևն» (188 էջ). երբ բան ևս Ա. Գրոց խօսերը իրարու հակառական կը ցուցընէն, և մերթ նորա վկայու-

Թեանց վրայ յեցեալք՝ կը հաստատեն իրենց մոլորութիւնքը (էջ 193), որոց գեմ  
Եղիկ և յարմար զենքեր կը դորժածէ:

Ահա այս ամէն վկայութիւններէն և գիտողութիւններէն՝ որոց նմանք դեռ շատ  
կը գտնուին՝ ի գիրս Եղնկայ և զբար զանց ըրինք չ'երկարելու համար, կրնամք ին,  
թագրութիւն մ'ընկէ լթէ ոչ բոլորպին սույր, այլ յօյժ հաւանական, թէ Եղիկ՝  
որպէսզի ինքն իր անձին հակասած չըլլայ, հարկ է որ ընդգէմ Հեթանոսաց,  
Պարսից, Յունաց իմաստնոց, որք բնու չ'եին հաւատար Ա. Գրոց և նորս վկայու-  
թեանց, խօսած չինի միայն բնութեան օրինակօք և բանական փաստիւք, ապա թէ  
մշ՝ հարկ պիտի լինէր այն ատեն ցուցընել նախ և հաստատել Ա. Գրոց շըմարտու-  
թիւնը և հեղինակութիւնը, և ապա իրրու զենք գործածել նորա խօսքերը:

Աստի կը հետեւ, թէ այն մասերն՝ որք աւելի քրիստոնէական հաւատաց կը վե-  
րաբերին և աստուածաբանութեան նըրագոյն ինդիրներ են, յորս գրեթէ միայն Ա.  
Գրոց վկայութիւնքը կը դորժածէ, յայտ է՝ որ կամ առ հաւատացեալս ուզզած է,  
և կամ հաւանականաբար հերետիկոսաց և հերձուածողաց գեմ դրեր է, որ և ա-  
ռանձին մաս մի կը կազմէ ուրայս՝ ի շորս մասանց կամ գրոց Եղնեկայ: Ի յաշորդն  
գեւ աւելի պիտի պարզեմք այն ինդիրս, անոր պատճառները քննելով, և ապա ընդ-  
հանուրը կերպով խօսելով նոյն գրոց կարգաբանութեան մասին և նորա ազրիւնե-  
րուն վրայ:

Յարութեակելի

Հ. Յ. Թ.

## ՃԻՆ ՔՆԱՐ

### ՏԱՂ

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌԻՆ

**Ը**անանցն կանինեալ եկին՝ ի գերեզման...  
Խունկս անոյշ բերին՝ ի յաւծանել ըզտէրն:  
**Ե**կրասով նըստեալ շուրջ ըզգերեզմանաւն  
Լային արտասուաւք ըզկենդ անին Յիսուս.  
**Ը**լացեալ սերովքէն սաւառնացեալ նըստէր,  
Ի վերայ վիմին ոսկիապատ թեաւքն.  
**Օ**րոհեալ անձկալին խանդազատէր սիրով,  
Զեզ մեծ աւետիք սյսաւը յարեաւ Քրիստոս.  
**Ը**հա տեղին ուր կոյր, գնացէք աշակերտեալք,  
Ա: Ետարաննեցէք եթէ յարեաւ Քրիստոս:  
**Ը**ախ Պետրոս ընթացեալ և Յոհաննէս ըզկնի,  
Գատին զվարշամակն շհաւատացին բանին.  
**Դ**արձան խընդութեամբ յօյժ իրնգարեր կանայքն  
Ետուն աւետին ցըրուեալ աշակերտացն:  
**Դ**ապալիսու ի ժամագրեալ տեղին,  
Ծնիթացեալ տեսին երկիր պազին նրմա:  
**Ը**ա հրզաւր փառաւք յարեաւ ի մեռնլոց  
Զդրժոխս աւերեաց և ազատեաց զգերեալսն:  
**Ք**րիստոսի փրրիչին կենդանարար Բանին  
Վայելէ պատիւ փառք յաւիտեանս. ամէն: